# Մասնակցային բյուջետավարումը տեղական ինքնակառավարման համակարգում: Քաղաքականություն թե՞ արդյունավետ կառավարում

***Պետրոսյան Ս. Մ.***
*Հայաստանի Պետական Տնտեսագիտական Համալսարան, ասպիրանտ*
*(Երևան, Հայաստան)*
samsonpetrosyan95@gmail.com

**Վճռորոշ բառեր՝** մասնակցային կառավարում, բյուջե, քաղաքականություն, բնակչություն, ռեսուրս

**Совместное бюджетирование в системе местного самоуправления. Политика или эффективное управление?**

*Петросян С. М.*
*Армянский Государственный экономический Университет (Ереван, Армения)*
samsonpetrosyan95@gmail.com

**Аннотация:** В статье рассматривается система совменстого бюджетирования как наиболее четкая форма участия насиления в местном самоуправлении. В этом контексте в статье дается определение совместного бюджетирования, его методы и их значение для повышения эффективности управления. Важность системы совместного бюджетирования заключается в том, что она как ресурсосберегающий инструмент, имеет огромный вклад в расширение прав и возможностей граждан путем поощрения их вовлечения в процессах управления. Посредством совместного бюджетирования население получает возможность стать участником в распределении доступных ресурсов, участвовать в решении проблем сообщества, потому что они сами, жители сообщества, более осведомлены о проблемах своего сообщества.
**Ключевые слова:** совместное управление, бюджет, политика, население, ресурс

**Participatory budgeting in the local self-government system: Policy or efficient governance?**

*Petrosyan S. M.*
*Armenian State University of Economics (Yerevan, Armenia)*
samsonpetrosyan95@gmail.com

**Abstract:** The article discusses the participatory budgeting system as the clearest form of local government participation of residents. In this context, the article discusses the definition of participatory budgeting, its methods and their importance in enhancing management effectiveness. The importance of a participatory budgeting system is that it, as a resource-saving tool, has a huge contribution to empowering citizens by promoting their involvement in governance processes. Through participatory budgeting, the population gets the opportunity to become a participant in the allocation of available resources, to participate in solving community problems, because the community residents themselves are most aware of their community's problems.
**Keywords:** participatory management, budget, policy, population, resource

Ժամանակակից աշխարհում կառավարման հիմնախնդիրների փոփոխությունները անհրաժեշտություն առաջացրին կառավարման նոր համակարգի ձևավորմանը, որը ճկուն և արդյունավետ կերպով կնպաստեր կառավարվող համակարգի նպատակների իրականացմանը: Այդպիսի յուրօրինակ համակարգ է մասնակցային կառավարման համակարգը: Մասնակցային կառավարման համակարգում կարևորագույն և անքակտելի բաղադրիչ է համարվում մասնակցային բյուջետավարումը: **Մասնակցային բյուջետավարման ընդհանուր միասնական սահմանում գոյություն չունի, սակայն ընդհանուր առմամբ մասնակցային բյուջետավարումը բնութագրվում է քաղաքացիների կողմից համայնքի բյուջեների առաջնահերթությունների սահմանում և ռեսուրսների բաշխման գործընթացում մասնակցություն:** Սա ժողովրդավարական գործընթաց է, որում համայնքի անդամներն ուղղակիորեն որոշում են, թե ինչպես ծախսել իրենց համայնքի բյուջեի մի մասը: Մասնակցային բյուջետավարման հաջողության համար անհրաժեշտ են նախ՝ համայնքի ղեկավարի կողմից քաղաքական կամքի ցուցաբերում, որն անհրաժեշտ է

համայնքում մասնակցային որոշումների ընդունման համար, և երկրորդ՝ քաղաքացիական կամք, որը անհրաժեշտ է բնակչության կողմից անձնական շահերի ստորադասումը հանրային շահերին: Այս երկու պայմանների բավարարման արդյունքում սկիզբ է առնում մասնակցային բյուջետավարման համակարգի ծնունդը: Մասնակցային բյուջետավարման գործընթացը իր մեջ ներառում է բնակչության շրջանում գաղափարների հավաքագրում, վերլուծություն և գնահատում, բնակչության հետ համատեղ որոշումների կայացում, գաղափարների իրագործում և վերահսկողություն [**1**]:

Մասանկցային բյուջետավարումը հնարավորություն է ընձեռում բնակչությանը կառավարման գործընթացի մասնակիցը դառնալ և ուղղակի ազդեցություն ունենալ հանրային ռեսուրսների բաշխման վրա: Մասնակցային բյուջետավարումը համարվում է կառավարման արդյունավետ գործիք, որը նպաստում է քաղաքացիների զորացմանը, նրանց ներգրավմանը կառավարչական գործընթացներին և մասնակիցը դառնալու լավ կառավարմանը, այն հնարավորություն է տալիս նվազեցնել տնտեսության արատավոր երևույթները ինչպիսիք են՝ հովանավորչությունը և կոռուպցիան: Մասնակցային բյուջետավարումը համարվում է կառավարման ապակենտրոնացման բարձր մակարդակ. Կառավարման տեսաբանները (Հայեկ, Վեյնգաստ) պնդում են, որ նման ապակենտրոնացման մոտեցումը դրականորեն է ազդում ժողովրդավարության և հանրային ծառայությունների մատուցման որակի վրա, կառավարչական մարմինները առավել տեղեկացված են լինում բնակչության խնդիրներին և նախասիրություններին [**2**]: Մասնակցային բյուջետավարումը սկզբնավորվել է 1980-1990թթ.-ին, երբ Բրազիլիայի համայնքային բնակչությունը առաջադրեց 2 հիմնախնդիր տեղի իշխանություններին. առաջինը հանրային ծառայությունների որակի բարելավումն էր, երկրորդը՝ տեղական նշանակության որոշումների ընդունմանը բնակչությանը մասնակցելու իրավունքը: Եվ այս առումով մասնակցային բյուջետավարումը լավագույն լուծումն էր ստեղծված իրավիճակին՝ մի կողմից այն տրամադրում է զգալի և շոշափելի օգուտներ քաղաքացիներին հանրային ծառայությունների տեսքով, մյուս կողմից՝ այն շատ արժեքավոր գործիք է քաղաքացիների վստահությունը մեծացնելու համար: Մասնակցային բյուջետավարումը առաջին անգամ կիրառվել է Բրազիլիայի Պորտո Ալեգրի քաղաքում, որի բնակչությունը կազմում է 1,4 միլիոն: 1988թ.-ին Պորտո Ալեգրի քաղաքում տեղի է ունենում իշխանափոխություն. նոր իշխանությունները ինչպես նաև քաղաքացիական հասարակությունը և համայնքային ասոցիացիաները նախաձեռնում են քաղաքի կառավարմանը բնակչությանը մասնակից դարձնելու կառուցակարգերի մշակմանը: Քաղաքային կառավարման մարմինները ստանձնում են պատասխանատվություն իրականացնելու այն ծախսային ուղղությունները որոնք քննարկվել և առաջարկվել են բնակչության մասնակցային մարմինները, այդպիսով քաղաքային կառավարումը էլ ավելի թափանցիկ դարձնելով: Նման մոտեցումը հնարավորություն է տալիս ապահովել բնակչության բոլոր շերտերի մասնակցությունը քաղաքի կառավարմանը, հատկապես աղքատ բնկաչության հատվածը, այն նաև բարձրացնում է մատուցվող ծառայությունների որակը այն ոլորտներում որոնք անտեսված են եղել քաղաքային իշխանությունների կողմից [**3**]:

Պորտո Ալեգրի քաղաքի օրինակելի փորձը ներկայումս կիրառում են աշխարհի շատ երկրներում: Մասնակցային բյուջետավարման կառուցակարգերը առավել զարգացած են Լատինական Ամերիկայի երկրներում, մասնավորապես, Պերուում երկրի սահմանադրությամբ ամրագրված է, որ մասնակցային բյուջետավարում պետք է իրկանացվի տեղական ինքնակառավարման բոլոր մակարդակներում: Մասնակցային բյուջետավարման փորձը կիրառվում է նաև Ֆրանսիայի տեղական ինքնակառավարաման համակարգում: Այստեղ գործում են խորհրդակցական մարմիններ, որոնք քննարկում են թաղային և համայնքային նշանակության ծրագրեր: Խորհրդակցական մարմինները կարող են որոշել բյուջեի ծախսային մասի 10%-ը: Ընդ որում խորհրդակցական մարմիններին հատկացվում է գումար գործունեությունը իրականացնելու համար մոտ 15000 եվրոյի չափով: Մեծ Բրիտանիան նույնպես անմասն չի մնում մասնակցային բյուջետավարման ընթացակարգերից, այստեղ տեղական միավորների հաջող փորձը ստիպեց իշխանություններին գործընթացը օրենսդրորեն կարգավորել և ստեղծել համապատասխան կառուցակարգեր: Մեծ Բրիտանիայում բյուջետային եկամուտների 1-20%-ը կարող են տնօրինել մասնակցային միավորները: 2008թ.-ին Մեծ Բրիտանիայում մշակվել է «Մասնակցային բյուջետավարման ազգային ռազմավարություն», որը նպատակ ուներ ամբողջ երկրի տարածքում տեղական մակարդակով իրականացնել մասնակցային բյուջետավարում [**4**]: Այսօր կարող ենք նշել, որ

այս նախագիծը գրեթե ամբողջությամբ իրագործվել է արդեն:

Ընհանուր առմամբ բոլոր նշված երկրներում մասնակցային բյուջետավարման հաջողության հիմք է ծառայել Պորտո Ալեգրի քաղաքի փորձը: Եվրոպական երկրներում ակտիվ դերակատարություն են ունեցել նաև հասարակական կազմակերպությունները, որոնց ակտիվ մասնակցությամբ է կյանքի կոչվել մասնակցային բյուջետավարման հաջողակ մոդելը: Ուսումնասիրելով վերը նշված երկրների փորձը հարկ ենք համարում նշել, որ հաջողության բանալին այն է, որ նշված գրեթե բոլոր երկրներում մասնակցային բյուջետավարման նախաձեռնությունն ի սկզբանե ցուցաբերվել է տեղական իշխանությունների կողմից, այլ ոչ քաղաքացիական հասարակության: Այս փաստը ևս մեկ անգամ ապացույցն է այն բանի, որ հաջողության արձանագրման համար անհրաժեշտ է օրենսդրական կարգավորումը, ձևական և պարտադիր կանոնների առկայությունը: Այս մոտեցումը երաշխիքն է այն բանի, որ երկրում «կեղծ» մասնակցային բյուջետավարման գործընթացներ չեն իրականցվում, և տեղական բյուջեի քննարկումները և պլանավորումը իրականցվում է քաղաքացիական հասարակության իրական մասնակցությամբ: Վ. Բայերլեի [**5**] կողմից «կեղծ» բյուջետավարման երևույթը որակվում է որպես «մասնակցային բյուջետավարման լույս, որը կորցրել է իր հոգին»:

Ուսումնասիրելով մասնակցային բյուջետավարման Պորտո Ալեգրի քաղաքի փորձը, ինչպես նաև դրա կիրառումը Լատինական Ամերիկայի և եվրոպական մի շարք երկրներում, կարող ենք պնդել, որ նշված մոդելը կարող է յուրատեսակ նախադեպ դառնալ ՀՀ համայնքների՝ հատկապես Երևան քաղաքի համար: Հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետությունում փոքր համայնքները չունեն բավականաչափ ռեսուրսներ քաղաքացիների կարիքները հոգալու համար, ուստիև այս պարագայում վերջիններիս մասնակցության ապահովումը դյուրին չէ: Քաղաքացիներն իրենց հերթին չեն վստահում իշխանություններին, քանի որ վերջիններս իրենց հետ երբևէ հաշվի չեն նստում [**6**]: Քաղաքացիները տարբեր կարծիքներ են հայտնում և առաջարկություններ անում որոշ թեմաների շուրջ, իսկ համայնքների ղեկավարների համար իրատեսական չէ այնպիսի որոշման կայացումը, որն ընդունելի լինի թեկուզ մեծամասնության համար, ուստի կարևորելով մասնակցային բյուջետավարման անհրաժեշտություն Տեղական ինքնակառավարման մակարդակում կարծում ենք, որ նշված մեթոդի զարգացումը ՀՀ-ում կբարձրացնի կառավարման արդյունավետության որակը, կձևավորի բնակչության և տեղական ինքնակառավարման մարմինների համագործակցության ուրույն դաշտ: Ընդհանուր առմամբ կարող ենք պնդել, որ մասնակցային բյուջետավարումը տեղական ինքկառավարմանը բնակչների մասանկցության առավելագույն աստիճանի և ամենահստակ ձևաչափն է:

**Օգտագործված գրականության ցանկ**


1. **Արտաշեսյան Ա., Մարգարյան Դ.**, Քաղաքացիական մասնակցությունը որոշումների կայացմանը տեղական մակարդակում, 2018թ.
2. **Brian Wampler**, A Guide to Participatory Budgeting
3. **Anwar Shah**, Participatory Budgeting; 2016
4. Giving more people a say in local spending: Participatory Budgeting: a national strategy, (2008), https://partycypacjaobywatelska.pl/wp-content/uploads/2013/10/PB-UK-national-strategy.pdf
5. **Հայրապետյան Ռ.**, Մասնակցային կառավարման զարգացման ուղղությունները տեղական իքնակառավարման համակարգում, Երևան 2015թ., էջ 68
6. Տեղական ժողովրդավարության ամրապնդումը Հայաստանում. Քաղաքացիների մասնակցության ուղեցույց, 2015թ.



*Сдана/Հանձնվել է՝ 23.03.2020*
*Рецензирована/Գրախոսվել է՝ 26.03.2020*
*Принята/Ընդունվել է՝ 01.04.2020*